Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5539

Բրնտրյան Ս

Սիրարկություններ
սուրբ Գրքերի մասին

4 դեկտ 1861

7018

3.3.
420
10602

ԱՌԱՔԱՐԿՈՒԹԻՒՆ

062(=91.90)
Թ-61

Կ. ՊՕԼԻՍ — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Ուզուն Չարշը փողոց, Շէրիֆ փաշա խան թիւ 13.

062 (=91-99)
Բ-61
280
300
1268-թի
1103
11711
9

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԱՌ

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ

ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԿՆԱՑ



ՄԱՏԵՍԿԱՆ-ՀԱՆՐՈՒԹԻՒՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publichnaya Biblioteka
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1866

8894

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԱՌ

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ

ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԿՆԱԾ

Բարեխորհուրդ Հայրենակիցք իմ.

Քաջ գիտէք որ, ըստ Աստուածային կամաց, ձմեռս մեր խրճիթմտանքները արթնալով՝ լաւ հասկրցանք մեր սխալմունքները, թէ որչափ աշխարհային հոգերու և մտմտուքներու մէջ ընկեր մնացեր ենք, և որքան սէր է, որ ձգեր եմք, կրսէինք, այս վաղանցուկ կենացը վրայ՝ որն որ երազի պէս պիտի անցնի երթայ: Ինչու համար ուրեմն յաւիտենականութիւնը չենք մտածեր, որն որ քիչ ատենէն այն ընդարձակ անապատին մէջ ոտք դնելու եմք: Ինչու համար է, որ այսչափ հոգերով և սրտմաշուք մտմտուքներով կը հալիմք կը մաշիմք աւուր պարէնի մը համար: Ահա ասոնք մտածելով՝ ինչ աստիճան թշուառութեան մէջ իյնալնիս իմանալով՝ բոլորս ալ միանգամայն սրտադողով և սարսափով պատեցանք, և քանի որ այն յաւիտենական երանութենէն զրկուելնիս ու անանցանելի դատապարտութեան մը մէջ հոգւով և մարմնով յաւիտենա-

կան տանջելենիս կերևակայէին՝ ահով ու տագնապով կը լեցուէինք։ Ուստի այս ամենասարսափի վտանգէն ազատ մնալու համար՝ ցանկացինք սիրայորդոր կամօք մը, որ այսուհետև մէկ մ'ալ աշխարհասիրութեան և փառասիրութեան սնոտի և չնչին բաներուն չհետևիմք և չկապուիմք անոնց՝ որոնք որ ալ ուրիշ բան չեն, բայց եթէ վաղանցուկ և մտախաբ բաներ՝ որ ստուերի մը շուքի պէս կանցնին, կերթան. ծաղկի նման շուտով կը թոռմին և կը չորնան։ Ասոնք միայն մեր զգալի աչքերը կրնան խաբել, ըսինք, արդարև ինչ է համբաւ ըսածդ, եթէ ոչ փայլակ մը, որ փութանակի կանցնի կերթայ, ուստի և մեր երկնաւոր վարդապետն ալ յայտնապէս կը յանդիմանէ զանոնք, որ կզոլուին մարդիկներէն և կը փառաւորուին, ըսելով թէ « Վայ որ ասիցեն զձենչ մարդիկ բարի »։ Նոյնպէս աշխարհիս շատ տեսակ բաներուն ալ՝ որ մեր աչաց ցանկութիւնը կը բռնադատէ զմեզ տեսնելու և ունենալու. ան ատեն ինչ ասահման հոգեկորոյս միջոցներ ձեռք կառնեմք, որքան հնարքներ, նենգու՝ թիւններ, խորամանկութիւններ կընեմք՝ միայն թէ զանոնք ձեռք բերեմք ու փառամոլութիւններս յագեցուցեմք։ Բայց և այնպէս գիտեմք ալ թէ այս կերպ ընթացքներս և այս միջոցներովը ներկայ և յաւիտենական երջանկութիւններս ամենահեռի փախուցած կըլլամք հոգիներս յաւիտենական մահուան և հրաբորբոք տանջանաց մատնուելենիս յայտ է. չգիտենք կուրաբար թէ մարմիններս ալ հիմակուընէ սուտ փառքերը ստանալու համար հանապազօրեայ նեղութեան վտանգի մէջ ձգած եմք մի։ Այո, գիտէք արդեօք, թէ որքան նեղութիւններ, որքան մտմտուքներ կը կրեմք և որչափ բազմատացնապ խորհուրդներով կեանքերնիս կը մաշեցուցեմք, իբր թէ աշխարհիս ստացուածքը, գանձերը և բոլոր վայելչութիւնները մեզի սեպհականեմք։ Ձեզ մտածեր անգիտաբար թէ այս ցանկութիւններուն որ մեկուն ետքը պիտի առնեմք. որքան ստանամքնէ ցանկութիւնիս լեցուի պիտի, և որքան ատեն պիտի վայելեմք. և ստացողները արդեօք գոհ եղած են, ոչ երբէք, ահա ասոր համար է որ կըսէ Քրիստոս թէ՝ « Շնացողներ, չէք գիտեր թէ աս աշխարհիս սէրը

Աստուծոյ դէմ Թշնամութիւն է »: Այս տեղ շնացողը ըսելով իրօք շնութիւն ընողներուն համար չըսէր, հապա անոնց՝ որոնք որ աշխարհիս հետ կապուեր մնացեր են, ասոնք Աստուծոյ դէմ Թշնամի համարուած կըլլան: Ափսոս, երբ Աստուած իրենց Թշնամի է, ալ ով ըլլայ իրենց բարեկամը. ինչու չենք մտածեր ալ Թէ աս աշխարհիս վայելչութիւնները փուճ և սնոտի բաներ են, միայն օրական ինչ հարկաւորեցաւ մարդուս նէ, անիկայ է իրեն սեպհական բաժինը և ոչ Թէ հաւաքած բազմազուարճ զանձերն ալ, որոնք զինքը բազմակերպ հոգերով տանջելէն զատ՝ ուրիշ օգուտ մը ալ չունին:

Այսպիսի վսեմական խորհուրդներով սկսեցինք մեր հոգւոյն և մարմնոյն համար՝ երջանկութեան հասցնող ճամբան գտնալու, և հաւատեաւ այս գտանք, Թէ պիտի առաջ ամենաբարին Աստուած մեզի սորվեցուց և պատուիրեց Թէ՝ « Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո, և Թէ՝ գործեսցես զերկիր ևայն » : Արդարև եթէ այս սուրբ պատուէրէն մարդկային ազգը չի խոտորեր նէ՝ բազմաթիւ մեղքերէ ազատ կըլլար, և այն զանազան չարիքներէն ազատ ըլլալով՝ բազմակերպ պատիժներ ալ չէր կրեր իւր Ստեղծողէն: Բաղդատենք մէկ անգամ երկրագործին ընթացքը քաղաքացւոյն ընթացիքը հետ, տես երկրագործը իր երկիր բրելուն արօրը (սապան տէմիրը) անգգայ հողոյն կը զարնէ և քաղաքացւոյն անկէց բերը կամ ուտելիք կը հանէ. տես քաղաքացին ալ Թէ ինչ կընէ, երկու ծայրն ալ սուր գործիք մը ձեռքն առած կերպ կերպ խորամանկութիւններով, նենգութիւններով և չարագոյն հնարքներով նախ իր հոգւոյն և հետևաբար ընկերին կը վնասէ, երկրագործը իր ժողված բերքերը որքան առատապէս քաղաքացւոյ կընծայէ ու ինքը միայն աւուր պարէնով կը բաւականանայ: Ցեռ նսեւ քաղաքներուն բազմաթիւ մարդիկները, միլիոնաւոր դատարկաշրջիկները անոնց աշխատանքովը կը կերակրուին, պալատները և մեծամեծ տուները երկրագործին աշխատութեամբը կը զարդարուին և մեծամեծ ամբարանոցները և վաճառանոցները դարձեալ երկրագործին քրտնաջան աշխատութեամբը կը լեցուին: Այս ամէն բաներու

վրայ տես ինչ կերպ վարմունքով կ'վարուի քաղաքացին երկրագործին հետ, անանկ որ զանոնք տեսնալն անգամ նախատինք կը սեպէ իրեն, որն որ արդէն միշտ անոնց մատուցներովը ժողոված արդիւնքներն և անոնց աշխատութեան արգասիքներն են որ ինքը առատաբար կը վայելէ: Թողումք ասոնք, մոռածեմք անգամ մը ու տեսնանք թէ՝ ինչ գործ որ բռնենք նէ, մեր ընկերին վնաս մը տուած չենք ըլլար: Ինչ ալ ըլլայ նէ, ամէն մարդ կը ջանայ որ իւր բաղդը, իւր շահը և օգուտը ընկերոջը վնասին մէջը փնտռէ, զորօրինակ եթէ գնող եմք՝ ծախու առնելու բաներնիս թեթև գնով մը, կամ արժէքէն շատ մը վար կէս գնով առնել կը ջանամք. իսկ եթէ վաճառող՝ ծախելիք բաներնիս կըսկսիմք գովել, զանիկայ հազուագիւտ բան մը ցուցնել, որպէսզի իր արժէքէն տասնապատիկ աւելի գնով ծախելու կարենամք համոզել:

Տեսնանք երկրագործին ալ ասանկ է մը, ոչ, հապա իւր հողին մէջ ինչ սերմ՝ որ դրաւ նէ՝ ի հարկէ նոյնը պիտի հնձէ: Ահա այս է քաղաքացւոյն և երկրագործին մէկմէկու դէմ ընթացքնին. տեսնենք թէ որուն ընթացքը Աստուծոյ կամացը համաձայն կրնանք գտնալ: Ամէն բերան կը խոստովանի որ երկրագործինը համաձայն է, և մարդկային ընկերութեան շահաւէտ և օգտակար, որ մէկը չի կրնար յուրաստ զալ, բայց քաղաքացւոյն ընթացքը Աստուծոյ կամաց հակառակ և մարդկային ընկերականութեանը վնասակար ըլլալով՝ յաւիտենական դատապարտութեան կը մատնուին: Արդարև՝ եթէ սուրբ Գիրքը և մեր խզճմտանքը հարցնենք նէ՝ յաւիտենական երջանկութենէն զրկուելէն զատ՝ դժոխքի տանջանաց կը գերուի մեր հոգին ու մարմինն ալ: Ո՜հ սարսափելի վիճակ, որ ոչ վերջ ունի և ոչ ծայր: Ով՝ մարդկային ազգ, ինչպէս կանմտանաս և որով կը համարձակիս այն հիմակուան ընթացքովդ Աստուծոյ արդար դատաստանին առջև երելու: Քաղաքացի՝ այս այն պատառը չէ որ մեծ էնք՝ պզտիկցնելով կըլլես, կարկտան ընդունելու ըզգեստ չէ ասիկայ, որ գոնէ կարկտան ընես, տես, Քրիստոս ինչ բան բացարձակապէս, «Թէ լայն և արձակ ճանապարհն է որ ի կո-

ռուտ յաւիտենական կը տանի, նեղ և անձուկ ի կեանս յաւիտենական:

Ստեղծուած մը ըլլալնիս ճանչնանք ու մտածենք ալ թէ հարիւր տարի առաջ յաշխարհ չէինք ծնած և հարիւր տարի ետքը ալ չպիտի մնամք և այնուհետև յաւիտենականութեանը մէջ ինկած պիտի տեսնամք: Ասոնք ի միտ բերելով պէտք է որ անոր համեմատ գործ բռնենք, անանկ գործ մը որ երկու կեանցուս համար երջանկութեան հասնինք, և այս ինչ բանով կըլլայ, եթէ ոչ Աստուծոյ կամացը համեմատ շարժելով:

Բոլոր տիեզերաց Արարիչը կուզէ որ նախ զինքը սիրենք և երկրորդ մեր ընկերները. բայց մենք այս հիմակու աշխարհասիրութեան և փառասիրութեան ընթացքովնիս այն ամենահարկաւոր Աստուծոյ տուած պատուէրները կատարած չենք ըլլար, վասն զի մեր վրայ աշխարհ սիրելու նշաններ շատ կը գտնուի, ասոր համար, այսինքն Աստուծոյ ահաւոր դատաստանէն սարսելով և յաւիտենական դժոխքի տանջանքներէն սոսկալով, և ժամանակիս կենաց համար ալ դիւրին կեանք մը անցուցնելու տժանաւոր հոգերէն ազատելու համար՝՝ ցանկացինք Նահապետական անուն Ընկերութիւնը կազմելու, որպէս զի անով կարենանք երկրագործական արդար վաստակոց համար աշխատիլ և միջոց ձեռք բերել: Այս ալ մեր քաղաքին դրիցը չ՚համեմատելով՝ մէյմը որ քաղաք տեղ չըլլար անոր համար և մէկ մը ալ բաւական հող չ՚գտնուելուն համար, ուստի ասանկ հանութիւն տրուեցաւ որ քանի մը անձինք երթանք Հայաստանի մէջ մեր Օսմանեան Տէրութեանը հողերուն արգաւանդ տեղ մը գիւղ մը կազմել և անդ միակերպ ըստ Թուոյ ընկեր ըլլացող տանց պարզ տուներ շինել, և պատրաստել ամէն երկրագործական վերաբերեալ գործիքները տեղւոյն կուսակալի հանութեամբ ինոստանդնուպոլիս դիմել և Տէրութեան Բարձրագոյն Դռնէն հրաման առնելով՝՝ քանի տուն որ ընկեր եղած ենք նէ՚ գաղթենք ի Նոր Հայ անուանուած գիւղը, քանի մը տուն այս կողմի խեղճերէն տանելով և քանի մը տուն Հայազգի մշակներ ի գիւղ բերել բնակեցնելու մեր

դրամը և քաղաքականութիւնը անոնց աշխատութեանը հետ խառնելով, բնական ընթացքով մեր ազգի կենաց պիտոյքը հոգալով և բարոյականութեամբ ալ մեր հոգւոյն պէտքերը պատրաստելով, տանելով հետերնիս մաքրակենցաղ քահանայ մը և Աստուածային երկիւղով զարգացած, իմաստուն վարժապետ մը, հոգևոր պաշտօնէին զՍուրբ Եկեղեցին զարդարել ամենայն փառաւորութեամբ թէ նիւթականաւ և թէ զինուորեալ եկեղեցեաւ, և իմաստուն վարժապետաւն ալ թէ մանչ և թէ աղջկանց մտքերուն անդաստանը սերմանել զբանս Սուրբ գրոց, և ուսուցանել անոնց ճշմարիտ բարոյականութիւն Քրիստոսի կամաց, Քրիստոնէութեան Աստուածահաճոյ ուսում և ընկերահաշտ քաղաքականութիւն. աւելորդ սեպելով անօգուտ ուսումները որ մեր ընթացքին և պարզ վարուցը չեն վերաբերիր:

Ինչպէս որ ըսինք, թէ տուները միակերպ ըլլայ պիտի, և զարդարանք ալ չունենայ պիտի, նոյնպէս մեր հագուստներն ալ համեստ ու պարզ ըլլալու է. բաւական համարելով բրդէ և բամպակէ զգեստները, որոնք որ մեր մարմինը պիտի պատսպարեն, ինչպէս որ մեր նախնի Սուրբ Հարք և առաքինի անձինք այս կերպ պարկեշտ հագուստներով ինքզինքնին կը պատսպարէին, ասոնց պէս նախնի Սպարտացիք և իմաստուն փիլիսոփայք ալ խորին կռապաշտութեան ատենները: Անհաւասիկ ասանկ պատուիրեց Յիսուս իր աշակերտներուն որ երկու հանդերձ չունենան, աւելորդ համարելով նորաձև զգեստները և աչաց գոյնատեսիլ նկարները որ ոչինչ են և մեր բարոյականութեան ալ խանգար կրնան ըլլալ:

Ասոնց նման կեցակերպնիս ալ պարզ և բնական յարմար ընել, ինչպէս որ բնութիւնը պարգևեր է մեզի, աւելորդ սեպելով արուեստաւոր զեղխութիւնէն յառաջ եկած ամէն բաները, որոնք որ օգուտ չունին ու վնասակար են: Հերիք սեպել մեր աշխատանքովը մեր հողէն ելած բերքերը որ Աստուած կը պարգևէ, ոչխարին կաթը, մեղուին մեղրը, ցորենին պարզ հացը, ծառի պտուղները, ծովին ձուկերն ու օդին թռչուններն միթէ չի բաւեր մեզի, պարզա-

պէս եթերունը եփել, չեփածն ալ չեփած ուտել որ տեսակներն ալ կը փոխենք ու հազարումէկ տեսակ խմորեղեններ ալ կը հնարենք :

Եւ մեր անդաստանին պտուղներուն մշակութեան աշխատանաց արդեանցը և ընտանի անասուններու ու վայրենի կենդանեաց տրուած վաստակներովը բաւական ըլլալով՝ յուսարութիւն չունալ, և մէկզ մէկէ վատկելու միջոցները խախանելով անանկ կանոն մը հաստատել որ չըլլայ թէ պանդխտութեան երթալու կարօտ ըլլանք, վասն զի շատ կը վնասուիմք և կը տանջուիմք. որովհետև մարդկային սրտին դէմ է և ընտանեացմէ զատուիլը անտանելի է: Այսպէս ըլլալով մէյմէկու օգնականութենէ զուրկ կըլլան թէ առն և կնոջը, թէ հօր և թէ որդւոցն: Ցեսէք անա երկրագործը ազատ է այս անտանելի վիճակէն և երջանիկ է, և Աստուած ալ չուզից որ ասանկ ըլլայ :

Աստուծոյ պարգև ըրած և մեր աշխատութենէն քաղած արդիւնքէն կամ արմտիքներէն նախ տէրութեան տասանորդը արդարապէս հանել տալու է, և երկրորդ մէկ բաժինն ալ գիւղին հասարակութեան ընծայել առաքինութիւն վաստկելու նպատակաւ, և երրորդ ամէն տուն իւր տարեկան պիտոյքը անձերի լեցունելէն ետև՝ աւելցածն ալ աւուր արժէքի գնով ծախել և կամ ծախելու խրկել, ամենևին չ'պահել թէ սուղ ծախենք, որ աւելի վաստակ ըրած ըլլամք, վասն զի ասանկով մարդկային ընկերականութեանը մեծ վնաս տուած կըլլամք և Աստուծոյ ժողովրդեան անէծքը կընդունիմք, ըստ այնմ թէ՝ «Ցորենը պահողին՝ ժողովուրդը անէծք կուտայ: »

Կանանց հագուստի զարդերն համեստութեան փոխել, փուճ ու մուճ բաներ շինելու ու կարելու տեղն՝ բամպակ և բուրդ մանելու կրթել և զբաղեցնել, որոնք կտաւի և վերարկուի գործածելու համար թէ տունէ և թէ յատկացեալ գիւղին մէջէն գործուի :

Գիւղին գործածութիւնները չորս անձանցմէ բաղկացեալ Ցեսչական ժողովի մը ձեռօք տեսնելու համար չորս անձինք ընտրուելով առաքինի և ալեօք պատկառելի ըլլան, որոնք ամէն խնամքները

ընելու աշխատին գեղին հասարակութեան օգուտին համար և այնպէս կառավարեն գիւղի ժողովուրդը, որ ոչ վէճի պատճառ ըլլայ և ոչ տարաձայնութեան: Վէճի պատճառ չըլլար, երբոր հասարակութեան միօրինակ խնամք տանին և դատաստան տեսնալու գործ մը պատահի նէ, զարմանալով մը իրաւունք չունեցողին ըսել. Թէ ընկեր ինչպէս վստահացար որ այդպէս ըրիր, ուրեմն մեղանչեցիր, ըսեն. երբ ներում խնդրէ՝ ներեն, ալ բնաւ չի յիշելու պայմանաւ, վասն զի Քրիստոս այսպէս կը հրամայէ:

Եւ տարաձայնութեան պատճառներն ալ վերցուելու փոյթ ունենան. ինչպէս տուները միաձև ըսինք, որ միւսն չը ցանկայ, նոյնպէս ալ զգեստները միօրինակ համեմատ ըլլալու է, աս ալ գիտնալու է որ Թէպէտ աղքատը հարուստին հագածին չի կրնար կարողանար հասնելու, բայց հարուստը կրնայ աղքատին համեմատիլ: Ասոնց պէս տէրութեան օրինաց համեմատ արքունական տուրքերը առանց ուշացնելու վճարելու փոյթ և ջանք պիտի ունենայ Տեսչական ժողովը, անանկ որ ուզած ատեննին մարդ մը գայ ուզէ նէ՝ եկած օրն կամ միւս օրն անմիջաբար տան ու ճամբեն: Ասով իրենց հաւատարմութիւնը տէրութեան իբրև մշտավառ երազ մը փայլեցընեն, և դրացի գիւղերուն հետ ալ ամենայն իմաստութեամբ և սիրով վարուելու միջոցներ ձեռք բերելու ենք, որպէս զի երբ դուրսէն անծանօթ Թշնամի մը պատահելու ըլլայ՝ ստիպուին դրացի գիւղացիք ալ պաշտպանելու զմեր գիւղը, կը պարտաւորիմք նաև դրացի գիւղացւոց մարդասիրութեամբ խնամք տանել, և անոնց մըտաւորական և նիւթական պիտոյքներ ընծայել, որով առաքինութիւն ըրած ըլլամք: Ասանկ կացութեամբ Թշնամի բնաւ չենք ունենար և մէկը մեզի հակառակ չի կենար, ինչու որ նախապէս Աստուած հաշտ կըլլայ ժողովրդեան հետ: Աստուած այն ժողովրդին վրայ հաճ և հաւան եղած ատենը՝ ով կրնայ չարիք հասցնել անոր. այլ ինչպէս որ կըսէ Սուրբ Գիրքը «Օրհնեալ զանդս և զանդասանս և զբերս,» արդարև Աստուծոյ ողորմութիւնը ու օրհնութիւնը անանկ տեղեր անպակաս կըլլայ միշտ:

Նա և կրօնական վերաբերեալ հոգերուն, եկեղեցական պաշտօնեայն և իւր ընկեր բարեկիրթ վարժապետը ուսումնասէր անձամբ կրնան ժողով մը կազմել և ամենայն բարեկարգութեան միջոցներով ձեռք բերել և ծաղկեցուցնել ամենայն փառաւորութեամբ : Մեր փառասիրութեան բաղձանքը առաքինութիւն գործել և Սուրբ Եկեղեցիս փառաւորապէս զարդարել պիտի ըլլայ, վասն զի պիտի ըսենք. « Մի մեզ Տէր մի մեզ, այլ անուն քում տուր զփառս. » Այսպիսի գեղեցիկ կարգադրութեամբ և համաձայն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ և մեր Լուսաւորչական դրութիւնները և աւանդութիւնները պահելով՝ ինչ զանազան առաքինութեան պտուղներ կերևի և ինչ մաքուր վարքեր կը փայլէ անդ : Այս ասանկ ըլլալէն ետքը շատ մը բարի մարդկանց նախանձելի և բարի օրինակ մը կրնայ ըլլալ, և ով չի փափաքիր թէ հոգևոր և թէ մարմնաւոր երջանկութեան պատճառ եղող միջոցին ձեռք զարնել, որ արդարև ստուգապէս նոր մարդ և Նոր Հայ գիւղ անուանելու իրաւունք կունենայ :

Վերոյ գրեալներն ամէնն ալ հետևաբար կըլլայ և եղածներն ալ շատ կենալուն ամէնքս ալ գիտնալով՝ փափաքեցանք այսպէս ընելու և ցանկացինք ալ փութապէս կատարելու, բայց ապասեցինք դիպող ժամանակին, և իբրև ուխտաւորեալ յԱստուծոյ խնդրեցինք և տեսանք որ մեր մտաց համաձայն Սուրբ Գիրքերն ալ յորդորեցին, և Արծուիկ լրագիրն ալ ազգասիրաբար մեր մտացը համաձայն Հայ ժողովուրդը երկրագործութեան հրաւիրեց : Մենք ուզեցինք ի Մուշ գնալ և տեսնալ հոն տեղի դիրքը, բերքը և բարքը, որ հոն դիմենք. ահաւասիկ նոյն լրագիրը ի Մուշ կամ ի Հայաստան հրաւիրեց, վասն որոյ մեծ զարմացում մը պատեց մեզ թէ մեր խորհուրդը ով յայտնեց անոր, որուն համար ըսուեցաւ թէ « Ի տեառնէ եղև, և է սքանչելի » . վասն զի մենք 1864 դեկտեմբեր ամսոյն վերջին օրերը խորհուրդ կընենք, 1865 յունուար 15 Թուականիս Արծուիկն ալ կը հրատարակէ . որ ոչ Թղթատար և ոչ ճանապարհի երթևեկութիւն կըլլայ Ակնայ, ի Մուշ : Այս յաջող դէպքերը մեզի մեծ ուրա-

խուՄիւն պատճառեց և կուզէինք շուտ մը ի գործ դնելու՝ բայց յուլիս ամսոյ վերջին օրերն եկաւ, և վասն էր տակաւին գործադիր ըլլալու խօսքեր չըլլար. և բոլորովին մոռացուՄեան տակ ինկած կը տեսնամք, ով բարեմիտ հայրենակիցք իմ և բարեխորհուրդ ընկերակիցք իմ: Մի Ծէ ի զուր բարբառեցաք, մի Ծէ հրեշտակ ամենակալի ձեզ վստահացոյց նախկին վիճակուդ վրայ և ընՄացքնուդ մէջ մնալ, մեր խղճմտանքները հանդարտեցան արդեօք, և կամ մէկը ձեր գործոյն խափանում եղաւ նորէն մեր մտքերը աշխարհային հոգերուն տալու. լուացուած խոզի պէս պիտի վերստին ընկըղմենք մեր հոգին մեղաց տղմին մէջ դարձեալ մեր նախնի սովորուՄեանց հետևելով, ոչ ապաքէն մեր կեանքը առօրեայ է և կարճ և ի վերջոյ ալ ձեռք չ՚անցնիր որ յաւիտենական կեանք վաստակինք, անցածը անցաւ և զացած ժամանակը ալ ետ չի դառնար, ապառնին մեր ձեռքը չէ, ուրեմն ներկայ կեանքերնուս յարգը գիտնամք. ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկուՄեան, ով որ կը փափաքի նէ՝ փնտռելու կելլայ, և ով որ չի փափաքիր՝ կը վհատի. բայց պէտք չէ վհատիլ, այլ անոր դիւրին միջոցներուն ձեռնարկուՄիւն ընելու է, նախ Աստուծոյ ամենառատ զՈՒՄեանը և ողորմուՄեանը ապաւիներով և անոր կամացն զմեզ յանձնելով, և բարեխօսուՄեամբ Ս. Ուրբ Աստուածածնի և Յովհաննու կարապետի, ասպարեզ ելլալու է և մեր յետագայ սերնդոց օգտին երկու կենաց համար պատկեր ստանալու և աշխատուՄիւնները կրելու:

Ո՛ ընկերակիցք իմ և բարեկամք, ձեր մէջէն տրուպտ և տարագոյնս ահաւասիկ ի նոյն կընՄանամ. դուք որ զօրաւորքդ էք և ամէն բանի փորձառու, նա մանաւանդ դուք աւելի ոյժ և կարողուՄիւն ունիք նպատակամատոյց լինել, հրչտի ևս առաւել պիտի վստահիք ասպարէզ ելլալու և յաղՈՒՄեան պատկի առնելու: Մի երկնչիք, զի Աստուած ընդ մեզ է, վասն զի այպէս կամեցաւ որ ընենք, մի տարակուսիք. հաւատով գործենք առանց վհատուՄեան. մեր հոգւոյ Ծշնամին դէմ Քրիստոս ախոյեան և մեզի զօրագլուխ ըլլալով՝ պիտի յաղՈՒ անոր և զորավիգ պիտի ըլլայ մեզի

իւր մշտավառ ողորմութեամբ մինչև յաւիտեան. եթէ միշտ իւր Սուրբ պատուէրները պահելու ըլլամք: Եւ երկրորդ մեր մարմնաւոր Թշնամիներէն մեծազօր արքունիք և բարեխնամ Կառավարութիւնն զմեզ պիտի պաշտպանեն և խնամակալ պիտի ըլլան մեր վերայ իբր Յատուծոյ կարգեալ: Նոյնպէս մեր Աստուածասէր համազգի իշխանք ալ նպաստամատոյց պիտի ըլլան մեր ճշմարիտ դիտաւորութեանցը նայելով, արդարև շատ անձանց հոգւոյ փրկութեան պատճառ ըլլալնիդ աներկբայ կրնամ խոստովանիլ, ինչպէս ըսի ահա տակաւ նախապէս ելայ ի յայս ասպարէզ, որ եթէ ձեզմէ զօրաւորագոյնն ելլար նէ՝ այն ուժով է ըսելով՝ տկարները կրծուլանային կամ կը տարակուսէին:

Այս մեր բաղձանաց և խորհրդին համեմատ կը փափաքիմ ի Սուրբ Կարապետ վանս, յոտս Սրբոյն Յովհաննու Մկրտչի բանին Աստուծոյ դիմել և անոր Սուրբ բարեխօսութեամբը մեր ամենիցս միանգամայն հոգւոյ և մարմնոյ փրկութեան ճամբայ ի Տեառնէ հայցել և սպասել իւր կամաց և տնօրէնութեանցը: Եւ դուք տեարք իմ և բարեկամք, ձեր յօժարութեամբը թէ որ կը բաղձաք նէ, դուք ալ աղօթող եղիք աստանօր և կամ ճանապարհորդակից ըլլալով ընդ իս անդանօր և միաբան հայցեսցուք բարեխնամ Տեառնէն, որ ինքն բացցէ մեզ զդուռն իւրոյ ողորմութեան և առաջնորդեսցէ ի գործս մեր ուղղակէս վասն այսր և վասն հանդերձեալ կենաց, մանաւանդ հանդերձեալ կենաց համար թէ և նեղութիւն մը ալ կրեմք նէ, թող կրեմք որ յաւիտենական երջանկութեան հասնինք:

Եւ զկնի ուխտի և երկրպագութեան. սկսիմ պիտի հարց և փորձ առնել Մշոյ գաւառին բերքը, բարքը, օդը և այն կողմի եղած բընակչաց ինչ ազգ ըլլալը, ինչու համար աւերակ եղած է գիւղերը, պիտի իմանամ, և պիտի հարցնեմ թէ կայ անանկ յարմար տեղ մը կամ գիւղ մը որ եթէ յԱկնայ քսան կամ երեսուն տուն գաղթական գայ ,վերոգրեալ նպաստական կրնայ բնակութիւն ընել կամ մարդ կը վնասէ մը անոնց եւայլն: Ինչքան տեղ և ինչքան գնով կառնուի, ընդամենը թուղթի վրայ առնելով, եթէ տէր՝կամեսցի, վերադառնա-

լու այն ատեն, ներկայացուցեմ պիտի ձեզի, որ եթէ բարեհաճիք նէ՝ նորէն ձեզի հետ հոն երթալով ամէն բան ի գործ կը դրուի: Հիմակ ու հիմակ այս խօսքերս հոն տեղը հաւաստի ըլլալու համար քանի մը ստորագրութիւն քովս կենալ հարկաւոր է, ուստի առ այժմ այս բարենպատակ ձեռնարկութեան առաջարկութեան գիրս կը մատուցանեմ ձեզ, դուք ալ եթէ կը բարեհաճիք նէ, ստորագրեցէք:

ՄԻՍԱՔ ԹԻՄՈՒՐԵԱՆ

1865 Յուլիս 22
Յակնայ քաղաքն

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
именна, Мисник'ян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՈՎ

2001

0012707

2013 5539

NL0022707